Նէր գրամ 'ի վանս, այլ և անկեալ էին ընդ պարտեօք, և հրաման Վէզիրին սաստիկ և անդառնալի էր. ուստի անկան 'ի դրունս քաղաքացի ժողովրդոց, և ժողովեցին զբրամս որքան եւ գտին կրկին տոկոսեօք, մինչեւ առնուլ զզարդս կանանց, խոստանալով նոցա դարձուցանել զկնի ամսօրեայ ժամանակի, և այսպիսի եղանակաւ հատուցին զ500 քսակս զբաժին Հայոց։

Յետ վախճանելոյ Պետրոս Պատրիարքի, որ կալաւ զԱթոռ Պատրիարքութեան ամս եօթն, ժողովեալ միաբանաց գրեցին գիր հանրական առ Պատրիարքն և առ իշխանաւորս ազգին՝ ծանուցանելով զմահ Պետրոսի. եւ ապա թախանձանօք խնդրէին 'ի նոցանէ ընտրել զմի ոք 'ի միաբանաց Ս. Յակոբայ լինել հովիւ և առաջնորդ ինքեանց, որում խոստանային հնազանդիլ և կրել 'ի գլուխս իւրեանց իբրեւ զպսակ ոսկի, և մի' ընտրել զոք յարտաքին Եպիսկոպոսաց. գրեցին նաեւ առ Յակոբ Եպիսկոպոս փոխանորդն հոգ տանիլ գործոյն։

Եւ յերկարիլ խնդրոյն, գրեցին նաեւ 3 Եպիսկոպոսունք, յորում յայտ առնէին զողբալի վիճակ թշուառութեան Աթոռոյն՝ յերեսաց հարստահարիչ և կեղեքիչ այլազգեաց. սոքա տկարացան և ճանձրացան 'ի գրելոյ զաղէտս իւրեանց, այլ ոչ կարացին զարթուցանել զազգային 'ի քնոյ. Յոյնք և Լատինք ծանեան զաղքատութիւնս և զթշուառութիւնս միաբանացն Հայոց, սկսան ոտնահար լինել և թշնամանել զնոսա և հակառակիլ 'ի բազում պարագայս, որպէս յայսմ ամի արգելին Լատինք զժամարարն Հայոց իջանելոյ 'ի Գիւտ Խաչն, որոյ վասն եղեւ վէճ 'ի մէջ երկուց ազգաց, և Յոյնք սկսան ծածկապէս որոգայթ լարել. զի ջանային հանել հրովարտակ հակառակ Հայոց, և շրջեցին զառաջին սէրն յատելութիւն։

Զկնի մահուան Պետրոս Պատրիարքի, խորհրդականք բացին զՊատրիարքարանն և գտին միայն 9000 դահեկան, եւ զտումարս ելից և մտից Աթոռոյն. պարտքն ծանրացեալ, եկեղեցական անօթք նուազեալ, և առանց գրաւի չէր ոք որ տայր զդրամ։ Յետ ծանուցանելոյ զայսոսիկ, զերկուս իրս առաջի եդին ազգին. կամ դնել 'ի գրաւի զմին Վ վանաց, որպէս լեալ էր յաւուրս Տեղակալաց,